Սուրբ Սարգիս զորավարի, նրա որդի Մարտիրոսի և 14 զինակիցների տոնը հանդիսավորությամբ նշվեց Վիրահայոց թեմի Սամցխե-Ջավախքի ու Ծալկայի ընդհանուր առաջնորդական փոխանորդությունում: Ամենուրեք այն արձանագրվեց նախատոնակով, Սուրբ Պատարագներով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ հաստատված երիտասարդների օրհնության կարգով:

2018 թվականի հունվարի 26-ին՝ երագահաս, խնդրակատար, երիտասարդների բարեխոս Սուրբ Սարգիս զորավարի նախատոնակին, Ախալքալաքի Երիտասարդական կենտրոնի սաները՝

Ախալքալաքի և հարակից գյուղերի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Տաթև քահանա Մարուքյանի ուղեկցությամբ, ծիավոր առաջնորդի գլխավորությամբ, շարժվեցին դեպի Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցի, որտեղ կատարվեց հանդիսավոր ժամերգություն: Տեր Տաթև քահանան հավուր պատշաճի քարոզ խոսեց, մեկնեց օրվա խորհուրդը, շնորհավորեց եկեղեցում հավաքված հավատացյալներին տոնի կապակցությամբ:Հավարտ ժամերգության՝կատարվեց երիտասարդների օրհնության կարգ և բաժանվեցին աղի բլիթներ:

Մինչև ուշ գիշեր չդադարեց ուխտավորների հոսքը Ախալքալաքի Սուրբ Խաչ և Դիլիսկայի Սուրբ Սարգիս եկեղեցիներ: Իսկ առավոտյան, Սուրբ Սարգսի տոնի օրը, Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցու դպրաց դասը, եկեղեցուն կից գործող կիրակնօրյա դպրոցի սաները, հավատացյալ ուխտավորների խումբը, Տեր Տաթև քահանա Մարուքյանի

ուղեկցությամբ, Սուրբ Սարգսի սրբապատկերով և խաչվառներով, շարականների

երգեցողությամբ շարժվեցին դեպի Դիլիսկայի Սուրբ Սարգիս եկեղեցի, որտեղ նրանց դիմավորեց Դիլիսկայի և հարակից գյուղերի հոգևոր հովիվ Արժանապատիվ Տեր Տիգրան քահանա Մխիթարյանը: Ուխտավորների թափորը միացավ Սուրբ Պատարագին:

Հունվարի 27-ին՝ Սուրբ Սարգիս զորավարի տոնն աննախադեպ էր Դիլիսկայի Սրբի անունը կրող եկեղեցում: Հովվական այցելությամբ այնտեղ էր գտնվում և տոնական Սուրբ Պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Սրբազան Պատարագին ներկա էին Վրաստանի Խորհրդարանի պատգամավոր Հենզել Մկոյանը, Ախալքալաքի շրջանային ժողովի նախագահ Նաիրի Իրիցյանը,Նինոծմինդայի շրջանային ժողովի նախագահ Սմբատ Կյուրեղյանը, քաղաքապետներ Անիվարդ Մոսոյանը, Յուրիկ Ունանյանը, այլ պաշտոնյաներ, հյուրեր և ուխտավորներ Ձավախքի բոլոր գյուղերից:

Հընթացս Սբ. Պատարագի, Վազգեն Սրբազանը անդրադարձ կատարեց Սուրբ Սարգիս զորավարի և նրա զինակիցների քրիստոնեական հավատի համար նահատակության պատմությանը, խոսեց տոնի խորհրդի մասին, փոխանցեց Ամենայն Հայոց Հայրապետի բարեմաղթանքները երիտասարդներին և, շնորհավորելով նրանց կատարեց երիտասարդների օրհնության կարգ:



Հավարտ Սբ.Պատարագի Վիրահայոց թեմի առաջնորդի ձեռամբ օծվեց Սուրբ Թադևոս Առաքյալի սրբապատկերը և իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց բարերարներին իրենց եկեղեցանվեր գործնեության համար:

Սուրբ Սարգիս զորավարի հիշատակության տոնը հավուր պատշաճի նշվեց նաև թեմի մյուս եկեղեցիներում:Տոնի օրերին եռուզեռ էր Նինոծմինդայի Սուրբ Սարգիս եկեղեցում: Երեկոյան

ժամերգությունից հետո, երիտասարդներով լեփ-լեցուն եկեղեցում արժանապատիվ Տեր Արմաշ քահանա Պողոսյանը, շնորհավորեց բոլոր Սարգիսներին և Մարտիրոսներին անվանակոչության կապակցությամբ, կատարեց երիտասարդների օրհնության կարգ և պահպանելով ժողովրդական ավանդույթը, նրանց բաժանեց Ռաֆայել Զավախ կենտրոնի սաների ձեռքով պատրաստած և գեղեցիկ ձևավորված աղի բլիթները:



Ախալցխայի և հարակից գյուղերի հավատացյալները Սուրբ Սարգիս զորավարի նախատոնակին և տոնական Սուրբ Պատարագին մասնակից դարձան Սազել գյուղի Սրբի անունը կրող եկեղեցում:Երեկոյան ժամերգությանը Արժանապատիվ Տեր Թորգոմ քահանա Վարդանյանը հավուր պատշաճի մեկնաբանեց տոնի խորհուրդը, անդրադարձ կատարեց նաև նրա երիտասարդների հովանավոր և սիրո բարեխոս լինելու պատմություններին և բաժանեց նրանց



աղի բլիթներ:Հաջորդ օրը տոնական Սուրբ Պատարագ մատուցեց Ախալցխայի հոգևոր տեսուչ՝ Հոգշ□ Տ□ Հակոբ աբեղա Սահակյանը: Պատարագի ավարտին կատարվեց երիտասարդների օրհնության կարգ:

Սուրբ Սարգսի տոնը նշվեց նաև Ծալկայի հովվությունում: